

Դատարանների կառավարման և դատական
գործավարության գնահատման վերաբերյալ Ռոբերտ
Լիփշերի պատրաստած զեկույցի մասին

Դ Ի Տ Ո Ղ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Հայաստանի Հանրապետության դատական համակարգի բավականին լուրջ վերլուծություն է ներկայացված սույն զեկույցում: Կատարված է լայնածավալ հետազոտական աշխատանք, որի արդյունքում ծնվել են բավականին արժեքավոր առաջարկություններ Հայաստանի դատարանների կառավարման և դատական գործավարության բնագավառներում:

Չնայած շատ հարցերում համամիտ եմ պարոն Լիփշերի հետ, սակայն որոշ առաջարկություններ ինձ անընդունելի են թվում:

Այս փաստաթղթում կանդրադառնամ մանրամասնորեն այդ զեկույցի կարևորագույն կետերին, ինչպես նաև կներկայացնեմ իմ դիտողությունները որոշ առաջարկությունների վերաբերյալ:

Դատական կառավարման բաժին

Այս բաժնում փորձագետը իրավացիորեն նկատում է, որ Հայաստանի դատական համակարգը չունի իր գլխավոր կառավարման մարմինը: Մի շարք պետություններում դա բարձրագույն դատական ատյանն է, որոշ պետություններում դա դատավորներից կազմված խորհուրդն է:

Այս մարմնից գատ, որը պատասխանատու է քաղաքականության որոշման համար, ճիշտ կազմակերպված դատական համակարգում կա գործադիր իշխանությունը ղեկավարող պաշտոնյա: Այս պաշտոնյային իր գործունեությունն իրականացնելու հարցում օժանդակում է վարչական մարմինը: Դեպքերի մեծամասնությունում այս պաշտոնյան դատական համակարգի բարձրագույն դատավորն է:

Հայաստանի Հանրապետության դատական համակարգում չկա հստակորեն առանձնացված դատական կառավարման բարձրագույն մարմին և չկա այն պաշտոնյան, որը իրականացնելու է դատական համակարգի գործադիր իշխանության ղեկավարի լիազորությունները:

Այդ մարմինները լինելուն հավակնում են դատարանների նախագահների խորհուրդը (ԴՆԽ) և դրա նախագահը, սակայն դա լիարժեք դերակատարում չի կարող լինել: Կառավարման բարձրագույն մարմին լինելուն խանգարում է ԴՆԽ լիազորությունների սահմանափակությունը, իսկ նրա նախագահը չի կարող ստանձնել գլխավոր գործադիր պաշտոնյայի դերը, քանի որ օրենքը նրա համար նման պատասխանատվություն չի սահմանել:

Որն է ստեղծված իրավիճակում ելքը: Ելքը դատական իշխանության միավորումն է, որը առաջարկում է փորձագետը, սակայն առաջարկվող լուծումները դժվար է համարել լավագույնը, չնայած դրանց մեջ կան հետաքրքիր առաջարկություններ:

Ինչ է առաջարկում փորձագետը: Այն դրույթը, որ միավորման ճանապարհին կարևորագույն խնդիր է հաշվետվության համակարգի ներդրումը, ոչ ոք չի կարող վիճարկել: Սակայն ինչպես պետք է հասնել հաշվետվության արդյունավետ համակարգի ներդրմանը:

Փորձագետն առաջարկում է հետևյալ քայլերը՝

- օրենքով սահմանել դատական համակարգն ամբողջությամբ կառավարելու ԴՆԽ պարտականությունը: Եթե այսօր չենք նախաձեռնում դատական կառավարման համակարգի ամբողջական փոփոխություն, ապա այս առաջարկը լիովին ընդունելի է.
- ԴՆԽ-ին տալ իրավասություն պարտադիր կատարման ակտեր ընդունելու: Այս իրավասությամբ ԴՆԽ-ին օժտելը անխուսափելի է, եթե մենք ուզում ենք ունենալ արդյունավետ կառավարման համակարգ: Սակայն պետք է ի նկատի ունենալ, որ պարտադիր կատարման հրահանգները կարող են վերաբերվել միայն վարչական բնագավառին.
- ԴՆԽ-ին իրավասու դարձնել սահմանել ծրագրեր և ընթացակարգեր դատական համակարգի համար և պահանջելու յուրաքանչյուր դատական օղակից կատարել դրանք: առաջարկությունն ընդունելի է և ուղղված է հաշվետվության համակարգի ներդրմանը դատական համակարգում.
- մոնիտորինգի իրավունք տալ ԴՆԽ-ին առանձին դատարանների նկատմամբ: այս հարցում պետք է շատ զգուշավոր լինել: Այս վերահսկողությունը պետք է լինի միայն դատարանների վարչական մարմինների նկատմամբ: Այն իրավիճակում, որում գտնվում է Հայաստանը, վերահսկող մարմինների թվի ավելացումը կարող է ունենալ անցանկալի հետևանքներ.
- սահմանել պաշտոն, որը պատասխանատու կլինի դատական ողջ համակարգը ղեկավարելու համար և միաժամանակ տալ նրան համապատասխան լիազորություններ: Այսօր սա ծայրահեղ

անհրաժեշտություն է, քանի որ որևէ պաշտոնյա այսօր չի զգում պատասխանատվություն ողջ համակարգի համար: Այսօր ըստ էության տիրում է կոլեկտիվ անպատասխանատվության մթնոլորտ.

- սահմանել դատարանի նախագահի պատասխանատվությունը ԴՆԽ և գլխավոր դատական պաշտոնյայի առջև՝ իր վարչական պարտականությունները կատարելիս, ընդհուպ մինչև պաշտոնանկություն: Խորհրդին լիազորություններ պետք է վերապահել նաև դատարանի նախագահի նշանակման գործընթացում: Դատարանի նախագահը պարբերաբար զեկույցներ է ներկայացնում գլխավոր դատական պաշտոնյային և ԴՆԽ-ին: Դատարանի նախագահին իսկապես պետք է պատասխանատու լինի կառավարման ոլորտում ԴՆԽ-ի և գլխավոր դատական պաշտոնյայի առջև: Ընդունելի է նաև զեկույցների համակարգի ներդրումը: Սակայն ԴՆԽ-ին իրավասություն տալ դատարանի նախագահի նշանակման հարցերում կամ նրա պաշտոնանկության հարցերում՝ անթույլատրելի է, ի նկատի ունենալով այսօրվա իրավիճակը: Այս առաջարկությունը ընդունելի կհամարվեր այն պարագայում, երբ «դատարանի նախագահը» պաշտոն չլիներ, այլ լիներ որևէ դատավորի լրացուցիչ պարտականություններ և այդ պարտականությունները փոխանցվեին բոլոր դատավորներին հերթականությամբ՝ ռոտացիայի սկզբունքով: Մեր իրավիճակում, երբ «դատարանի նախագահը» պաշտոն է, առաջարկը ընդունելի է մասամբ.
- դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և հետաքննություն իրականացնելու գործառույթը արդարադատության նախարարից փոխանցել դատական համակարգին: Բացարձակապես անընդունելի առաջարկ է: Այն մոտեցումը, որ կարգապահական հարցի հարուցումը (և ոչ լուծումը) արդարադատության նախարարի կողմից դատավորների անկախությունը նսեմացնող գործոն է՝ մեթոդոլոգիապես սխալ է: Հարցը կայանում է նրանում, որ ես արդարադատության նախարարի նշված գործառույթը դիտարկում եմ զսպումների և հակակշիռների մեխանիզմների տեսանկյունից, ինչը բնականաբար չի հակասում և չի կարող հասկասել իշխանությունների բաժանման սկզբունքին.
- միավորել կամ մեծացնել դատարանները: Մեծացնել առաջին ատյանի դատարանների դատական տարածքները՝ կրճատելով այդ դատարանների թիվը: Մտածել Երևան քաղաքի դատարանների միավորման մասին: Միավորել երեք վերաքննիչ դատարանները: Թեև առաջարկը որպես հեռանկարային գաղափար ընդունելի է, այսօր այն անիրագործելի է մի շարք պատճառներով: Առաջին. վերաքննիչ դատարանների միավորումը հակասում է

Սահմանադրությանը, քանի որ Սահմանադրությունը նախատեսում է մեկից ավելի վերաքննիչ դատարանների գոյություն: Երկրորդ. առաջին ատյանի դատարանների դատական տարածքների մեծացումը կրեթի իրավիճակի, երբ որոշ մարզեր չեն ունենա իրենց դատարանները, ինչը միարժեքորեն չի գնահատվի այդ մարզերի բնակչության կողմից: Երրորդ. առաջին ատյանի դատարանների խոշորացումը կրեթի շենքային պայմանների փոփոխությունների, ինչը լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների անհրաժեշտություն առաջ կբերի.

- ընդլայնել վարչական մարմնի գործառույթները: Լիովին ընդունելի առաջարկ է.
- դատական վիճակագրության և դատական պչակտիկայի ուսումնասիրման և ամփոփման իրավունք վերապահել միայն ԴՆԽ-ին. Անարդյունավետ առաջարկություն է: Չի կարելի լուրջ ընդունել այն փաստաարկը, որ արդարադատության նախարարության կողմից դատական վիճակագրության և դատական պչակտիկայի ուսումնասիրման և ամփոփման լիազորության իրականացումը խախտում է դատավորների ասանկախությունը: Այլ խնդիր է ԴՆԽ կողմից այս գործառույթների իրականացման կատարելագործումը: Սակայն արդարադատության նախարարությանը դրանից զրկելը կնշանակի անհնարին դարձնել նախարարության կողմից իր այլ լիազորությունների իրականացումը: Օրինակ, առանց դատական պրակտիկայի ուսումնասիրման և ամփոփման, նախարարությունը չի կարողանալու պատշաճ մակարդակով իրականացնել օրենսդրության կատարելագործման իր լիազորությունը.
- մեծացնել դատավորների ժողովների դերը: Այս առաջարկությունը ընդորնելի է, սակայն ինքնանպատակ լինել չի կարող: Եթե ընդլայնում ենք ժողովների լիազորությունները, ապա նրանց պետք է տանք դատարանների կառավարման մարմնի դեր, ինչը այսօր նրանք չունեն: Այս պարագայում ժողովները դառնում են կառավարման բարձրագույն մարմին: Այս դեպքում անհրաժեշտություն կաառաջանա ունենալ նաև կառավարման մշտապես գործող մարմին, որը կստեղծվի ժողովի կողմից: Այս մարմինը կարող է փոխարինել ԴՆԽ-ին և ամենևին պարտադիր չէ, որ նրա կազմում ընդգրկված լինեն դատարանների նախագահներ: Այս մոդելը լիովին նոր կառավարման համակարգ է պարունակում իր մեջ, ինչը էականորեն տարբերվում է գործող համակարգից, սակայն իմ համար լիովին ընդունելի է.
- ընդլայնել գրանցման գրասենյակի գործառույթները: Ընդունելի առաջարկ է.

- միավորել դատավորների օգնականներին և ընդլայնել նրանց գործառույթները: Առաջարկն ընդունելի է.
- վերաքննիչ դատարանների գործառույթների ընդլայնում: Ընդունելի առաջարկ է: Մասնավորապես, բարդ գործերը առաջին անգամ վերաքննիչ դատարանի կողմից լսելու կամ վերաքննիչ դատարանի առանձին դատավորներին բարդ գործեր լսելու համար առաջին ատյանի դատարաններ գործուղելու առաջարկները քննարկման արժանի առաջարկներ են:

Գլոբալ առումով առաջարկվող մոդելը կարելի է համառոտ նկարագրել հետևյալ կերպ. քաղաքականությունը սահմանվում է ԴՆԽ կողմից, իրականացնում է գլխավոր դատական պաշտոնյան (ԳԴՊ)՝ վարչական մարմնի միջոցով: Կատարումը տեղի է ունենում դատարանների նախագահների ղեկավարությամբ գործող բաժինների միջոցով (աշխատակազմեր):

Այս մոդելը թերևս ընդունելի է, իհարկե վերը նշված դիտողությունները հաշվի առնելով:

Ներկայացնելով դիտողություններս փորձագետի առաջարկությունների վերաբերյալ, ուզում եմ ներկայացնել նաև որոշ դատողություններ դատական համակարգի կառավարման վերաբերյալ ընդհանրապես:

1. Դատական համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքը (սահմանադրական նոր լուծումների անհրաժեշտությունը)

Հայաստանում գործում է եռաստիճան դատական համակարգը: Ցավոք պետք է նշել, որ այս համակարգի առաջին փորձաքայլերն այնքան էլ հուսադրող չեն: Սա խոսում է այն մասին, որ անհրաժեշտություն է առաջացել հետադարձ հայացք նետելու սահմանադրական լուծումներին:

Իր առավելություններով հանդերձ եռաստիճան դատական համակարգն ունի մի մեծ թերություն. դատական բարձրագույն ատյանի լիազորությունները համարժեք չեն դատական համակարգում նրա համար նախատեսված դերին: Այս իրավիճակից էլքի պարզագույն լուծման կողմնակիցները գտնում են, որ կարելի է դուրս գալ այս իրավիճակից ընդլայնելով վճռաբեկ դատարանի իրավասությունների ծավալը: Սակայն սա լուծում է սուկ առաջին հայացքից, քանի որ նման լուծումն իր հերթին բերում է մի շարք պրոբլեմներ, որոնք ուղղակիորեն խոսում են եռաստիճան համակարգի վերացման օգտին: Չնայած, պետք է նշել, որ այս կարծիքն ունեցողները ուղղակիորեն չեն հիմնավորում երկաստիճան համակարգի վերականգնման անհրաժեշտությունը:

Իմ խորին համոզմամբ, դատական ուժեղ համակարգ մենք կարող ենք ունենալ միայն այն պարագայում, եթե ունենանք դրա շատ հզոր բարձրագույն ատյանը: Պատշաճ մակարդակով արդարադատության իրականացման համար եռաստիճան դատական համակարգի արդյունավետության մեջ համոզված լինելով՝ իրավիճակից ելքը տեսնում եմ Հայաստանի դատական համակարգի բարձրագույն նոր մարմնի ստեղծման մեջ: Այդ մարմինը օժտված է լինելու միաժամանակ և սահմանադրական արդարադատության, և վճարելիության իրավասություններով: Գտնում եմ, որ այս մոտեցումը հնարավորություն կտա շատ կարճ ժամանակահատվածում կայացած դատական համակարգ ունենալ:

Հաջորդ կարևորագույն սահմանադրական խնդիրը իշխանության մյուս ճյուղերի հետ զսպումների և հակակշիռների հարաբերակցության հարցն է: Սա ուղղակիորեն առնչվում է իշխանության այլ ճյուղերից դատական իշխանության անկախության խնդրին, ինչը նույնպես առաջին հերթին սահմանադրական խնդիր է:

ՀՀ Սահմանադրության համաձայն օրենսդիր իշխանությունը ուղղակի առնչություն չունի դատական համակարգի հետ (Ազգային ժողովը չի մասնակցում դատավորների նշանակման և պաշտոնանկության հարցերին, նրանց պատասխանատվության ենթարկելու հարցերին կամ նրանց հրահանգավորման հարցերին: Խորհրդարանը չունի վերահսկողական լիազորություններ դատական համակարգի նկատմամբ):

Խորհրդարանի հիմնական լծակը դատարանների վրա ներագրելու՝ դա օրենսդրական գործունեությունն է: Բացի այդ, որպես դատական իշխանության հետ հարաբերման լծակ, կարելի է դիտարկել պետական բյուջեի հաստատման խորհրդարանի լիազորությունը, ինչը ուղղակիորեն առնչվում է դատական համակարգի բնականոն գործունեության հետ: Գործող օրենսդրության շրջանակներում դատական համակարգը ի գործու է ազդել այս երկու ուղղություններով խորհրդարանի կողմից ընդունվող որոշումների վրա: Ինչ վերաբերվում է գործադիր իշխանության հետ հարաբերություններին, ապա դատական համակարգը համաձայն օրենսդրության, կառավարության հետ հարաբերվում է արդարադատության նախարարի միջոցով: Սա չի նշանակում, որ կառավարության մյուս օղակների հետ դատարանները չեն հարաբերվում ընդհանրապես: Պարզապես, որպես գործադիր համակարգի ներկայացուցիչ միայն արդարադատության նախարարն է, որ օրենքի հիման վրա՝ իր որոշումներով կարող է ներագրել դատական համակարգի վրա. արդարադատության նախարարը մասնակցում է դատավորների նշանակման գործընթացին (արդարադատության խորհրդին է ներկայացնում դատավորների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ցուցակները, արդարադատության խորհրդին է ներկայացնում դատավորների թեկնածություններ, դատավորի նկատմամբ հարուցում է կարգապահական վարույթ, առաջարկություն է ներկայացնում

դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ): Միայն մեկ լիազորություն գոյություն ունի, որ չի իրականացվում՝ արդարադատության նախարարի կողմից. դա ՀՀ գլխավոր դատախազի՝ արդարադատության խորհրդին դատավորի կալանավորման վերաբերյալ առաջարկ ներկայացնելու իրավունքն է: Այս լիազորությունը բխում է դատախազության սահմանադրական լիազորություններից, և ՀՀ գլխավոր դատախազը՝ որպես հետաքննության և նախաքննության ղեկավարումն իրականացնող գլխավոր պաշտոնատար անձ, իրավասու է դա իրականացնել: ՀՀ Սահմանադրության համաձայն անձին կարելի է կալանավորել միայն դատարանի որոշմամբ: Բայց եթե այլ կատեգորիաների համար գործում է սովորական կարգը, երբ քննությունն իրականացնող անձը դիմում է դատարան կալանավորման միջնորդությամբ, ապա դատավորի պարագայում այս կարգը բարդեցված է: Սկզբում գլխավոր դատախազը դիմում է արդարադատության խորհրդին՝ դատավորի կալանավորման միջնորդությամբ: Եթե խորհուրդը հիմնավորված չի համարում այդ միջնորդությունը, նա մերժում է այն և հարցը համարվում է փակված: Եթե խորհուրդը համաձայնվում է գլխավոր դատախազի հետ, ապա առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորին կալանավորելու վերաբերյալ: Այնուհետև Հանրապետության Նախագահը քննարկում և որոշում է կայացնում համաձայնվել կամ չհամաձայնվել դատավորին կալանավորելու վերաբերյալ: Այս ամբողջ պրոցեդուրան ավարտելուց հետո միայն քննությունն իրականացնող մարմինը կարող է դատարանի առաջ հարց բարձրացնել դատավորին կալանավորելու թույլտվություն ստանալու վերաբերյալ: Ակնհայտ է, որ այս հարցում դատավորները օժտված են լուրջ պաշտպանական մեխանիզմներով:

Իհարկե այս պաշտպանական մեխանիզմները իմաստավորվում են այն պարագայում, երբ դատական իշխանության անկախության երաշխիքները գործունե են:

Այդ գործիքների շարքում մեծ է արդարադատության խորհրդի դերը: Թեև այս մարմինը այսօր բավականին արդյունավետ իրականացնում է իր լիազորությունները, սակայն կյանքը թելադրում է նրա վերակառուցման անհրաժեշտությունը: Լիազորությունների ծավալի առումով թերևս այն բավարարում է ներկայացվող պահանջներին: Սակայն իր կազմով և գործունեության մեխանիզմներով բարեփոխման կարիք ունի:

Սահմանադրական փոփոխությունների շրջանակում անհրաժեշտ է բարեփոխել այս ինստիտուտը՝ այն դարձնելով գուտ դատավորներից կազմված մի մարմին: Չնայած այսօր նրա կազմի մեծամասնությունը դատավորներ են, սակնհայտ է, որ Հանրապետության Նախագահի, արդարադատության նախարարի, գլխավոր դատախազի և երեք այլ դատախազների ներկայությունը այդ մարմնի կազմում գործոն է, որը կարող է կաշկանդել խորհրդի անդամ դատավորների գործունեությունը: Այս մարմինը արդյունավետ կարող է

դառնալ այն ժամանակ, երբ կլինի գուտ կորպորատիվ հիմունքներով ստեղծված ինստիտուտ:

Ներկայումս գործում է Հանրապետության Նախագահին կից սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը: Բարձրացված հարցերը, ինչպես նաև այլ օրախնդիր հարցեր ենթակա են պարտադիր քննարկման մասնագիտական հանձնաժողովի կողմից:

Որպես համակարգի գործունեության շարունակման կարևորագույն քայլ պետք է դիտարկել առաջին ատյանի դատարանների դատավորների մասնագիտացումը: Այսօր սա լրջագույն խնդիրներից մեկն է:

2. Դատական համակարգի կառավարման ինստիտուտները

Համաձայն ՀՀ Սահմանադրության 91 հոդվածի՝ դատարանների միակ և կարևորագույն գործառույթը արդարադատության իրականացումն է: Սակայն դատական համակարգը, ինչպես իշխանության մյուս ճյուղերը, միասնական օրգանիզմ է, որն ունի իրեն բնորոշ ներքին գործառույթները: Սա դատական համակարգի ինքնակառավարումն է, համակարգի ներսում որոշումներ ընդունելու և դրանք կենսագործելու կամքն ու հնարավորությունը: Եվ այս շրջանակներում յուրաքանչյուր դատական ատյան կամ յուրաքանչյուր դատարան ունի իր սպեցիֆիկ լիազորությունները:

Հայաստանի դատական համակարգում առանձնանում են դատական համակարգի կառավարման իրավասությամբ օժտված չորս օղակներ՝

դատարանի նախագահ

դատարանների նախագահների խորհուրդ

արդարադատության խորհուրդ

դատավորների մասնագիտական միավորում (միավորումներ):

Այս օղակներից յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ լիազորությունները:

Եթե դատարանի նախագահի ինստիտուտը նորույթ չէր մեր համակարգի համար և լիազորությունների ծավալի տեսանկյունից փոքր տարբերություններով գործել է նախկին համակարգում, ապա դատարանների նախագահների խորհուրդը նոր երևույթ է դատական համակարգում: Խորհրդային միության նման տոտալիտար հասարակարգում, որտեղ արհամարհված էր իշխանությունների տարանջատման սկզբունքը, դատական իշխանության անկախության մասին խոսք լինել չէր կարող: Այդ իսկ պատճառով իմաստագուրկ էր ունենալ դատական համակարգի միասնականությունը խորհրդանշող կամ ներկայացնող մարմին, որը պատասխանատու կլիներ համակարգի համար և որպես դրա հետևանք իրավասու կլիներ կայացնելու քաղաքական որոշումներ: Այն շրջանում այս ոլորտի մենիշխանությունը արդարադատության նախարարությանն էր:

Դատական համակարգի բարեփոխումից հետո այս իրավիճակը չէր կարող հանդուրժվել: Սա էր դատական համակարգի ինքնակառավարման մարմնի ստեղծման պատճառը, ինչը ամրագրվեց «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքում:

Դատարանների նախագահների խորհուրդը (այսուհետև՝ ԴՆԽ) ունի դատարանների կառավարմանն առնչվող թերևս ամենալուրջ իրավասությունները:

ԴՆԽ-ն փաստորեն գործում է 1999թ. հունվարի 12-ից: Այս ընթացքում ԴՆԽ-ն ունեցել է մի քանի նիստեր: Ընդունվել են երկու տասնյակից ավելի որոշումներ, որոնք վերաբերվել են հիմնականում օրենքների կիրառման վերաբերյալ խորհրդատվական պարզաբանումներին:

ԴՆԽ-ն ըստ էության քաղաքականություն կերտող մարմինն է դատական համակարգում: Դատական համակարգում քաղաքականության ձևավորման առավել ընդունելի տարբերակը ներքևից վերև համակարգն է: Ակնհայտ է, որ պրոբլեմները հիմնականում ծնվում են ստորին օղակներում, որտեղ տեղի է ունենում անմիջական աշխատանքը, և հետևաբար պրոբլեմները առավել նկատելի են ստորին օղակներում: Դատական համակարգում քաղաքականության ձևավորումը կարելի է դիտարկել հետևյալ հաջորդական քայլերի ամբողջությամբ.

պրոբլեմի առաջացում տեղերում կամ նման պրոբլեմի առաջացման վտանգ (օրինակ. առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում դատավորը կանգնում է օրենքի նորմի մեկնաբանության դժվարության առջև, կամ հայտնաբերում է կիրառման ենթակա օրենքների հակասություն, կամ վերաքննիչ դատարանում առկա են ֆինանսավորման ձգձգման խնդիրներ).

խնդրի արձանագրում (հարցի քննարկում տվյալ դատարանի մակարդակով և այդ մակարդակով կարծիքի ձևավորում).

խնդրի քննարկում ԴՆԽ-ում.

որոշման կայացում ԴՆԽ կողմից:

Վերոգրյալի տրամաբանությամբ ԴՆԽ կողմից կայացվող որոշումների ամբողջությունը ըստ էության կարելի է դիտարկել որպես դատական համակարգի քաղաքականության խտացված արտահայտություն:

Խնդիրների կամ պրոբլեմների բացահայտման հարցը կարևորագույն հարցերից է կառավարման գիտության տեսանկյունից: Արդյունավետ կառավարվող համակարգերում առավել մեծ ռեսուրսներ են ներդրվում պրոբլեմների բացահայտման և նախականիման վրա, քան դրանց լուծման կամ հարթեցման վրա:

ԴՆԽ ունի մի կարևորագույն լիազորություն, համաձայն որի նա իրավասու է քննարկել դատարանների բնականոն գործունեությանն առնչվող հարցեր: Այս լիազորությունը այդ մարմնին հնարավորություն է ընձեռում քննարկել և իր դիրքորոշումը հայտնել դատական համակարգում առկա ցանկացած խնդրի վերաբերյալ: Սակայն կյանքը ցույց տվեց, որ այս

լիազորությունը պետք է ուժեղացնել: ԴՆԽ-ին պետք է իրավունք վերապահել ոչ միայն քննարկելու, այլև որոշումներ կայացնելու ողջ դատական համակարգի նկատմամբ:

Չնայած օրենքը նախատեսել է ԴՆԽ նիստերի հաճախականություն՝ ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ, սակայն այս մարմինը իրավունք ունի առավել հաճախ գումարելու իր նիստերը: ԴՆԽ նիստերի հաճախակիացումը և գործունեության ակտիվացումն, ընդհանրապես, պրոբլեմների բացահայտման կամ բացահայտված պրոբլեմների լուծման ուղիների որոնման լավագույն ճանապարհն է:

Դատական ինքնակառավարման մարմինների լիազորությունները անիրագործելի կլինեն, եթե բացակայեն դրանց կենսագործման երաշխիքները: Այդ երաշխիքներից է դատական ադմինիստրացիան՝ դատարանների աշխատակազմերի համակարգը:

Այսօր այդ համակարգն ունի հետևյալ տեսքը. յուրաքանչյուր դատարան ունի իր աշխատակազմը, իսկ վճռաբեկ դատարանի կազմում ստեղծված է մի կառուցվածքային միավոր, որն իրականացնում է ԴՆԽ աշխատակազմի դերը: Այս համակարգը դժվար է կատարյալ համարել:

Նախ, դատական վարչակազմերի բուրգի գազաթում պետք է լինի ոչ թե վճռաբեկ դատարանի աշխատակազմը, այլ ԴՆԽ աշխատակազմը: Վերջինս պետք է ունենա դատական բոլոր վարչակազմերի գործունեությունը համակարգողի ֆունկցիա: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է այդ օղակը առանձնացնել վճռաբեկ դատարանի աշխատակազմից:

Երկրորդ, դատարանների վարչակազմերի կառավարման համակարգը պետք է կառուցել ուղղաձիգ ենթակայության և երկակի ենթակայության սկզբունքների համադրման հիման վրա: Դատարանների վարչակազմերի ղեկավարները պետք է ենթարկվեն ինչպես տվյալ դատարանի նախագահին, այնպես էլ ԴՆԽ նախագահին և /կամ ԴՆԽ աշխատակազմի ղեկավարին: Սա կապահովի դատական ողջ վարչակազմի համաձայնեցված և սահուն աշխատանքը, ինչը այսօր բացակայում է:

Այս վերակառուցումը պետք է իրականացնել շատ զգույշ, ապահովելով բալանսավորված մոտեցումը: Միաժամանակ վտանգավոր է դատարանի վարչակազմը ամբողջովին հանել տվյալ դատարանի նախագահի ենթակայությունից և տալ ԴՆԽ-ին, այնպես, ինչպես վտանգավոր է դատարանի վարչակազմի լիովին ենթակայությունը միայն դատարանի նախագահին՝ առանց ԴՆԽ աշխատակազմի կողմից բոլոր դատարանների վարչակազմերի գործունեության համակարգման:

Նման բալանսավորված մոտեցման կարելի է հասնել վարչակազմերի ղեկավարների նշանակման օպտիմալ կարգի սահմանման, ԴՆԽ և առանձին

դատարանների աշխատակազմերի աշխատողների պարտականությունների հստակ շրջանակների ուրվագծման և մի շարք այլ քայլերով:

Այս խնդիրներն իրագործելու ճանապարհին անհրաժեշտություն է առաջանալու փոփոխության ենթարկել «Դատարանակազմության մասին» օրենքի որոշ դրույթներ և ԴՆԽ աշխատակազմի կանոնադրությունը:

3. Դատական ինքնակառավարման ոչ ինստիտուցիոնալ գործոնները և դրանց կիրառման վիճակը կամ Դատաիրավական բարեփոխումների ինստիտուցիոնալ կազմակերպումն ապահովող օրենքների հիմնախնդիրները

բյուջե և ֆինանսներ

Այս պրոբլեմը դատական համակարգի առջև ծառանում է երկու արտահայտությամբ:

Առաջին խնդիրը կենտրոնացված ֆինանսավորման խնդիրն է: Նախկին դատական համակարգում դատարանների ֆինանսավորումը կենտրոնացված էր և իրականացվում էր արդարադատության նախարարության միջոցով: «Դատարանակազմության մասին» օրենքի ընդունումից հետո յուրաքանչյուր դատարան ստացավ բյուջետային «ինքնուրույնություն»՝ սկսեց ֆինանսավորվել անմիջապես պետական բյուջեից, առանձին տողով: Այս նորամուծությունը չույժեց այն էֆեկտը, որն ակնկալվում էր: Նպատակը դատարանների անկախության ապահովումն էր արդարադատության նախարարությունից, սակայն դատարաններն ընկան կախման մեջ ֆինանսական գերատեսչություններից և ստացան ֆինանսավորման դժվարություններ: Ստեղծված իրավիճակում ելքը վերադարձն է կենտրոնացված ֆինանսավորման, սակայն դա պետք է իրականացվի ոչ թե արդարադատության նախարարության, այլ ԴՆԽ կողմից:

Հաջորդ խնդիրը դա դատական համակարգի ներսում բյուջետային գործընթացի կանոնակարգվածության բացակայությունն է: Համաձայն օրենքի ԴՆԽ կազմում և ըստ յուրաքանչյուր դատարանի՝ կառավարություն է ներկայացնում դատարանների բյուջետային ֆինանսավորման հայտերը: Այդ հայտերի նախագծերը կազմում և ԴՆԽ են ներկայացնում առանձին դատարանների նախագահները:

Անհրաժեշտ է այս հարաբերությունները կանոնակարգող փաստաթղթի ընդունումը ԴՆԽ կողմից, որում կպարունակվեն հետևյալ հարցադրումների պատասխանները՝ ինչ կարգով և ժամկետներում է դատարանի նախագահը կազմում իր դատարանի բյուջետային ֆինանսավորման հայտը, ինչպես են այդ հայտերը քննարկում անցնում ԴՆԽ աշխատակազմում, ԴՆԽ աշխատակազմի իրավասությունը այդ հայտերում փոփոխություններ կատարելու ուղղությամբ, ԴՆԽ կողմից այդ հայտերի քննարկման կարգը և այլ հարցեր:

կադրեր

Լրջագոռւյն պրոբլեմ է պաշտոնների անձնագրերի բացակայությունը: Չնայած դա ԴՆԽ պարտականությունն է, այն մինչև օրս ընդունված չէ:

Դատական համակարգում չկան աշխատողներ, որոնք մասնագիտացված են դատական վարչարարության գործում: Սա թերևս ոչ միայն դատական համակարգի պրոբլեմն է: Հայաստանն այսօր փորձառու կառավարիչների պակաս ունի կառավարման բոլոր ոլորտներում:

Դատական համակարգի առաջնահերթ խնդիրներից է դատական վարչարարության գծով պրոֆեսիոնալ մենեջերների պատրաստումը: Դա կարող է իրականացվել դատարանների նախագահների խորհրդի ենթակայության տակ ստեղծվող ուսումնական կենտրոնի միջոցով: Անհրաժեշտ է այս բնագավառում հատուկ ուսումնական ծրագրերի մշակում:

տեղեկատվական համակարգ

Սա մեր լրջագոռւյն պրոբլեմներից է: Կարելի է արձանագրել, որ դատական համակարգը չի տիրապետում տվյալների որևէ բազայի:

Դատական համակարգի համար ամենակարևոր տեղեկատվական համակարգը դա օրենսդրական տվյալների բազայի վրա հիմնված տեղեկատվական համակարգն է:

Այսօր Հայաստանում ստեղծված են մեկ - երկու նման տեղեկատվական համակարգեր, որոնք մասնավոր բիզնեսի բնագավառում են գործում: Այդ համակարգերից օգտվելու ծառայությունները վճարովի են, իսկ պետական բյուջեն այսօր նման ֆինանսավորում չի նախատեսում և չի էլ կարող նախատեսել:

Պետությունը նման տվյալների էլեկտրոնային բազա դեռևս չի ստեղծել:

Դատական համակարգի տնօրինման տակ նման բազայի ստեղծումը դատական համակարգի գործունեության բարելավման լավագույն միջոցներից մեկը կհանդիսանար:

Կարևորագույն հարց է դատավորներին համակարգիչներով ապահովումը:

Դատական գործերի կառավարման համակարգչային համակարգի ներդրումը ևս վարկային ծրագրի կարևորագույն կոմպոնենտներից պետք է լինի:

Չի ընդունված նաև դատավորների միջև գործերի բաշխման կարգը, ինչը հրատապ անհրաժեշտություն է:

Քարոզչական տեխնոլոգիաներ

Գաղտնիք չէ այն փաստը, որ իշխանության յուրաքանչյուր մարմին շահում է հասարակության վստահությունը ազնիվ և որակյալ աշխատանքով: Առավել ևս հայտնի ճշմարտություն է այն, որ դատական համակարգի իմիջի ձևավորման առաջնահերթ ձևը դատարանների կողմից պատշաճ մակարդակով արդարադատության իրականացումն է: Սա նշանակում է մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող, անկողմնակալ և չկաշառվող դատավորներ, որոնք որոշումներ են կայացնում օրենքի հիման վրա՝ իրենց ներքին համոզմամբ: Հակառակ դեպքում հարգանքի և օժանդակության որևէ ակնկալիք դատական համակարգը չի կարող ունենալ:

Սակայն ժամանակակից հասարակության պայմաններում ստեղծված են որոշակի միջոցներ (գործիքներ), որոնց գործադրումը անխուսափելի է դառնում յուրաքանչյուր ինստիտուտի կողմից, որը մտահոգ է իր իմիջի ձևավորման հարցում:

Որոնք են դատական համակարգի հնարավորությունները հասարակության կարծիքի վրա ազդելու և նրա վստահությունն ու աջակցությունը ստանալու գործում: Թերևս դրանցից կարևորագույնները կարելի է համարել՝

աշխատանքը լրատվության միջոցների հետ.

դատարանի հետ առնչվող քաղաքացիների հետ հարաբերություններում էթիկայի կանոնների խստիվ պահպանումը դատավորի և դատարանի աշխատակազմի աշխատողների կողմից.

կայացվող դատական ակտերի մասնագիտական պատշաճ որակը.

դատավորների բարոյական անխոցելի նկարագիրը:

Լրատվության միջոցների հետ աշխատանքը այսօր դատական համակարգում ոչ թե անպատշաճ է իրականացվում, այլև ընդհանրապես բացակայում է: Ժամանակակից հասարակությունը ստեղծել է դատական իշխանության և տեղեկատվական համակարգերի փոխգործողության շատ արդյունավետ եղանակներ, որոնք թույլ են տալիս խուսափել դատարան-մամուլ լարված փոխհարաբերություններից: Սակայն սա լուրջ քննարկման առարկա է, որը ես պատրաստվում եմ մանրամասն վերլուծել հետագայում:

Դատական էթիկայի և դատավոր-դատավարության մասնակից փոխհարաբերությունների բազմաբնույթ կոմպլեքսը ենթակա էր կարգավորման «Դատավորի վարքագծի կանոնագրքով»: Այս փաստաթուղթը պետք է ընդունվի ԴՆԽ կողմից:

Ինչ վերաբերում է արդարադատության իրականացման պատշաճ մակարդակին, ապա կայացվող դատական ակտերի որակը այստեղ ոչ վերջին տեղն է զբաղեցնում: Դատական ակտերի որակի վրա ազդող բազմաբնույթ գործոններից ես կուզենայի հատկապես նշել դատավորների մասնագիտացման խնդիրը: Այս հարցը բարձրացվել է սկսած դատաիրավական բարեփոխումների ակունքներից: Չնայած վերաքննիչ մակարդակում հնարավոր եղավ խուսափել տարածքային կազմավորման

աբսուրդային գաղափարից, սակայն մասնագիտացման հիմնական հարցը չլուծվեց: Խոսքը առաջին ատյանի դատարանների դատավորների մասնագիտացման մասին է: Թերևս արտահայտած կլինեմ դատական համակարգի բոլոր ներկայացուցիչների կարծիքը այն առումով, որ մասնագիտացումը առաջին ատյանի դատարաններում հրատապ անհրաժեշտություն է: Այսօրվա իրավիճակը բերում է արդարադատության իրականացման որակի կտրուկ անկման:

Հայաստանի մեծագույն պրոբլեմներից է իրավական նիհիլիզմը: Պետությունը հրատապ միջոցներ պետք է ձեռնարկի փոխելու համար հասարակության վերաբերմունքը օրենքի և դատարանի նկատմամբ: Հրատապ անհրաժեշտություն էմ համարում միջնակարգ կրթության համակարգում իրաքական պատշաճ որակով դասընթացների ընդգրկումը:

Ուսումնական հաստատությունների կամ իրավաբանական սացիալացիաների միջոցով բնակչության իրավական օգնության աշխատանքների կազմակերպումը ևս լուրջ քայլ է հասարակության անդամների իրավական գրագիտության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ: Այս աշխատանքները պետք է կազմակերպվեն՝ օգտագործելով փաստաբանների միությունների աջակցությունը:

Առանձին խնդիր կարող է լինել վճռաբեկ և վերաքննիչ դատարանների դատական ակտերի հրապարակումը, ինչը լուրջ ուսուցողական նշանակություն ունի:

բարոյական նորմեր

«Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը սահմանում է դատավորի լիազորությունների դադարեցնելու և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը: Համաձայն այս օրենքի 30 հոդվածի առաջին մասի՝ դատավորի լիազորությունները կարող են դադարեցվել, եթե նա կատարել է այնպիսի արարք, որը «Դատավորի վարքագծի կանոնագրքի» համաձայն հիմք է նրա լիազորությունները դադարեցնելու համար:

«Դատավորի վարքագծի կանոնագիրքը» պետք է լինի այն հիմնարարն փաստաթուղթը, որը կսահմանի դատավոր-հասարակություն հարաբերությունների ողջ կոմպլեքսը, կսահմանի դատավորի բարոյական նկարագիրը, նրա հարաբերությունները դատական համակարգի ներսում և արտադատարանական հարցերում:

Ցավոք այս հիմնարար փաստաթուղթը դեռևս ընդունված չէ, ինչը անկիրառելի է դարձնում վերոհիշյալ օրենքի դրույթը, ինչպես նաև չի տալիս

այն ստիմուլը, որը պետք է ստիպի դատավորներին նմանվել «առաքինի և անկողմնակալ դատավորի» կերպարին:

«Դատավորի կարգավիճակի մասին» օրենքը դրույթներ է պարունակում նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին: Այս պատասխանատվությունը վրա է հասնում դատավորի այն զանցանքների համար, որոնք նա թույլ կտա իր ծառայողական պարտականությունները կատարելիս կամ արտածառայողական հարաբերություններում, որոնք սակայն բավարար չեն նրա լիազորությունները դադարեցնելու համար (ավելի թույլ օրինախախտումներ): Դրանք կատարելու համար դատավորի նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժի միջոցներ:

«Դատավորի կարգավիճակի մասին» օրենքը սահմանում է նման տույժերի կիրառման հիմքերը, որոնց զգալի մասը ևս ուղղակիորեն առնչվում են «Դատավորի վարքագծի կանոնագրքի» հետ: Համաձայն այս օրենքի 14 և 15 հոդվածների.

«Դատավորը թե դատարանում իր պարտականությունները կատարելիս, թե արտածառայողական հարաբերություններում պարտավոր է խուսափել այն ամենից, ինչը կարող է վնասել դատարանի հեղինակությանը և դատավորի բարձր կոչմանը, կասկած հարուցել դատավորի անաչառության և անկողմնակալության նկատմամբ:

Դատավորն իրավունք չունի հրապարկել դատավորների խորհրդակցության և քվեարկության գաղտնիքը, դոմփակ դատաքննության ժամանակ ստացած տեղեկություններն ինչպես պաշտոնավարության ժամանակ, այնպես էլ պաշտոնաթողությունից հետո:

Դատավորը պարտավոր է խստագույնս պահպանել էթիկայի և բարոյականության նորմերը:»

Հարկ է նշել, որ վերոհիշյալ դրույթները իրենց զարգացումը պետք է գտնեն «Դատավորի վարքագծի կանոնագրքում»:

Այս կանոնագրքի մշակման ուղղությամբ որոշակի աշխատանքներ կատարված են: Առկա է ՀՀ դատավորների միության կողմից ընդունված Կանոնագիրքը, կա բավականին ծավալի մեթոդական նյութ, որը կարող է օգտագործվել Դատարանների նախագահների խորհրդի կողմից «Դատավորի վարքագծի կանոնագրքի» մշակման և այնուհետև ընդունման համար:

Դատարանների նախագահների խորհուրդը պետք է անհապաղ ձեռնամուխ լինի այս Կանոնակարգի մշակմանը և առաջին հերթին ստեղծի դատավորներից կազմված աշխատանքային խումբ:

4. Դատավորի անկախության ինստիտուտի մի քանի հարցեր

Ապացուցման կարիք չունի այն ճշմարտությունը, որ համակարգի անկախությունը խարսխված է նրա էլեմենտների անկախության վրա: Դատական համակարգը կարող է անկախ լինել, եթե ապահովված է դատավորի անկախությունը:

- Չնայած դատաիրավական բարեփոխումներն իրականացնողներին հաջողվեց ստեղծել դատավորի կարգավիճակը սահմանող բավականին հաջող օրենք, սակայն անկախության ռեալ երաշխիքների առումով կատարյալ պատկեր ունենալուց բավականին հեռու ենք:
- Դատավորի՝ այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակման ինստիտուտի ներդրման պայմաններում չսահմանվեց դատավորի լիազորությունների կասեցման ինստիտուտը: Կարծում եմ դա անհրաժեշտություն է, որը պետք է ստանա օրենսդրական ամրագրում:
- Դատավորի անփոփոխելիության ինստիտուտը պետք է կրի որոշակի փոփոխություններ: Մասնավորապես, դատավորի՝ պաշտոնի փոփոխությունը կաշկանդել միայն դատավորի համաձայնությամբ, ըստ իս արդարացված չէ: Կարծում եմ արժե մտածել դատական համակարգում ռոտացիայի մեխանիզմի ներդրման մասին: Ընդ որում, ռոտացիան կարող է վերաբերվել ինչպես առաջին ատյանի դատարանների դատավորների տարբեր տարածքներում միմյանց փոխարինելուն, այլև նույն դատարանում դատարանի նախագահի ինստիտուտին:
- Հաջորդ խնդիրը դատավորների պաշտոնավարման տարիքն է: Նկատի ունենալով այսօր Հայաստանում երկարակեցության մակարդակը, ազգաբնակչության կենսաբանական առանձնահատկությունները, թերևս նպատակահարմար է նվազեցնել պաշտոնավարման տարիքը: Իհարկե բացառություն կարելի է անել վճռաբեկ ատյանի համար:
- Դատավորի անկախության կարևորագույն նախապայման է նրա ընտրության օբյեկտիվ չափանիշների սահմանումը, ինչպես նաև ընտրության բուն մեխանիզմի թափանցելիության և անաչառության ապահովումը: Ինչ օրենսդրական հիմքեր կան այսօր Հայաստանում նշված խնդրի լուծմանը հասնելու համար: Գործող «Արդարադատության խորհրդի մասին» օրենքն ընդհանրապես չի անդրադառնում այս հարցերին, իսկ արդարադատության նախարարության կանոնադրությունը, որտեղ հատուկ բաժին է նախատեսված դատավորների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ցուցակների նախապատրաստման կարգին, այն պատշաճ իրավական ակտը չի կարող լինել (իրավական ակտերի աստիճանակարգության մեջ այդ ակտին վերապահված տեղի առումով), որը կկարողանա լուծել նմանատիպ լուրջ խնդիր: Թերևս միանշանակ կարելի է ասել, որ օրենսդրական հիմքերն անվբավարար են: Ցավոք Ազգային ժողովում մերժվեց ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությունը՝ «Բարձրագույն իրավաբանական որակավորող հանձնաժողովի մասին» օրինագծի տեսքով: Այս օրենքի

խնդիրը պետք է լիներ սահմանել դատավորի թեկնածուներին ներկայացնող օբյեկտիվ պահանջները և դատավորների թեկնածուների ընտրության մեխանիզմի սահմանումը:

- Անկախության իրական տարրերից է դատավորների նշանակման և պաշտոնազրկման մեխանիզմները: Այն, որ այդ մեխանիզմները այսօր անկատար են, ակնհայտ է: Քննարկման արժանի է այս մեխանիզմներում Ազգային ժողովին ընդգրկելու մասին գաղափարը:

Ելնելով վերոգրյալից, հնարավոր է հանգել որոշակի եզրակացությունների, որոնց անվիճելիության մեջ համոզված չեմ, սակայն դրանց քննարկման անհրաժեշտությունը անխուսափելի եմ համարում:

Եզրակացություն 1.

Սահմանադրությամբ ամրագրված դատական համակարգը ենթակա է վերափոխման: Վերափոխման կարիք են զգում նաև արդարադատության համակարգի և դատավորների անկախության երաշխիքներին առնչվող մի շարք ինստիտուտներ:

Եզրակացություն 2.

Դատական համակարգը ինքը պետք է պահպանի իրեն և իր անկախությունը: Այս համակարգը պետք է ցույց տա, որ ինքն իսկապես ուժեղ է, հավասարապես կարևոր իշխանության այլ ճյուղերի հետ միասին, հարկ եղած դեպքում կարող է ինքնապաշտպանական մեխանիզմներ աշխատեցնել:

Եզրակացություն 3.

Ծայրահեղ անհրաժեշտություն է դատական իշխանության և մամուլի, լրատվության միջոցների հարաբերությունների հայեցակարգի մշակումը: Մեր հասարակության այս երկու կարևորագույն, սակայն լիովին չկայացած և հեշտությամբ խոցելի համակարգերը պետք է համագործակցեն միմյանց աջակցության տեսանկյունից և ոչ ընդհակառակը:

Եզրակացություն 4.

Արդարադատության նախարարության առաքելությունը դատական իշխանությանը «ծնունդ տալուց հետո» պետք է լինի նրան հասցնելը մինչև կայուն հասունացման վիճակը: Այս իրավիճակին հասնելու ռեալ հիմքերն այսօր առկա են և մեծ ցանկության դեպքում խնդրի լուծմանը կարելի է հասնել կարճ ժամանակահատվածում: Դրանից հետո գործադիր իշխանության ինելամտությունը կայանալու է հովանավորի կարգավիճակից հեշտությամբ հրաժարվելու կարողության մեջ:

Քաղաքակիրթ հասարակարգում արդարադատության նախարարությունը կոչված պետք է լինի դառնալու հաղորդակցման ուղի իշխանության դատական և գործադիր թևերի միջև և ոչ երբեք դատական իշխանության խնամակալ

Եզրակացություն 5.

Պետական քարոզչական մեքենան պետք է ուղղվի դատական համակարգի հեղինակության ամրապնդման նպատակին:

Եզրակացություն 6.

Հասարակությունը առավել մեծահոգի պետք է գտնվի դատական համակարգի նկատմամբ: Դատական համակարգի հնարավոր սխալները պետական առանձին պաշտոնյաներին և մարմիններին պետք է տան ոչ թե դատական իշխանությանը քննադատելու առիթ, այլ պետք է խորհելու առիթ տան այդ սխալները ուղղելու համար դատական համակարգին աջակցություն ցույց տալու առումով:

20.03.2000թ.

Հովհաննես

Մանուկյան

ՀՀ տնտեսական գործերով վերաքննիչ
դատարանի նախագահ,
դատարանների նախագահների խորհրդի անդամ,
երկրորդ որակավորման դասի դատավոր